ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"26" մարտի 2026թ. N 680-Լ

ք. Երևան

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1966-ն որոշման հավելվածի 13-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 698-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին հասանելիության ապահովման պետական աջակցության փորձնական ծրագրի» հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և հայտին ներկայացվող պահանջներին համապատասխանության ստուգման նպատակով ստեղծել գնահատող հանձնաժողով և հաստատել գնահատող հանձնաժողովի անհատական կազմը և նշանակել քարտուղար՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել գնահատող հանձնաժողովի գործունեության և հայտերի գնահատման ընդհանուր կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3/26/2026

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի 2026
թվականի մարտի 26-ի թիվ 680-Լ
հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.	Գևորգ Մանթաշյան	**Հանձնաժողովի նախագահ** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ
2.	Գևորգ Կարապետյան	«Հերկուլեսը Էյ Այ», ԱՄՆ, Կալիֆորնիա, ընկերության համահիմնադիր, Գլխավոր տեխնոլոգիական տնօրեն, «OMNISHIFT.AI» ընկերության գործադիր տնօրեն
3.	Ռեմ Դարբինյան	«Սմարթ Քլիք», Հայաստան, ընկերության հիմնադիր տնօրեն
4.	Նիկոլաս Շուլ	Mistral AI պարզեցված բաժնետիրական ընկերություն (SAS) (գրանցման համար՝ 952418325), Ֆրանսիա, Արհեստական բանականության կիրառական համակարգերի առաջատար ինժեներ
5.	Մատիս Վենիանտ	Mistral AI պարզեցված բաժնետիրական ընկերություն (SAS) (գրանցման համար՝ 952418325), Ֆրանսիա, Լուծումների գործառնությունների մենեջեր
6.	Ալֆրեդո Գոմես Սորիա	PLUG AND PLAY PLATFORM SPAIN սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (S.L.), (ՀՎՀՀ՝ B98446487), Իսպանիա, EMEA տարածաշրջանային տնօրեն
7.	Թեոդորա Պրեդա	PLUG AND PLAY PLATFORM SPAIN սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (S.L.), (ՀՎՀՀ՝ B98446487), Իսպանիա, Տնօրեն

8.	Սաշա Ռուբել	Amazon Web Services EMEA սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (SARL) (գրանցման՝ B 186284), Լյուքսեմբուրգ, EMEA (Եվրոպա, Մերձավոր Արևելք, Աֆրիկա) տարածաշրջանի Գեներատիվ արհեստական բանականության քաղաքականության ղեկավար
9.	Ֆրանկո Սպիչարիելլո	Amazon Web Services սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (SARL) (գրանցման՝ B 186284), Լյուքսեմբուրգ, Հարավային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հանրային քաղաքականության տնօրեն
Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝		**Հեղինե Մարգարյան** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության թվային առաջընթացի ավագ մասնագետ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի 2026
թվականի մարտի 26-ի թիվ 680-Լ
հրամանի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳ

1. Գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ներքին իրավական ակտերին և սույն կարգին (այսուհետ՝ Կարգ) համապատասխան:
2. Հանձնաժողովն անկախ է գործում է կոլեգիալության և շահերի բախման բացառման սկզբունքների հիման վրա:
3. Հանձնաժողովը բաղկացած է 9 (ինը) անդամից:
4. Հանձնաժողովն ունի նախագահ և քարտուղար:
5. Հանձնաժողովի նախագահը ղեկավարում է Հանձնաժողովի գործունեությունը, առաջարկում Հանձնաժողովի նիստերի ժամանակացույցը, հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը, Հանձնաժողովի քարտուղարին տալիս է հանձնարարականներ:
6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում վերջինիս փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:
7. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամ չէ և չի մասնակցում քվեարկությանը: Քարտուղարը.
   ա) կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները,
   բ) հաշվառում և Հանձնաժողովին է ներկայացնում հայտերը և Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության ենթակա այլ փաստաթղթեր,
   գ) ապահովում է Հանձնաժողովի նիստերի ձայնագրումը կամ տեսաձայնագրումը,
   դ) կազմում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,
   ե) անհրաժեշտության դեպքում կազմակերպում է Հանձնաժողովի կողմից անկախ փորձագետների ներգրավման աշխատանքները,
   զ) անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հայտում ներկայացված տեղեկության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումների ստացման նպատակով դիմողների հետ հաղորդակցությունը,

է) ապահովում Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ փաստաթղթերի անվնաս պահպանումը թղթային կամ էլեկտրոնային եղանակով (այդ թվում՝ ա) անհրաժեշտության դեպքում ամպային տիրույթում),

ը) իրականացնում է սույն Կարգով նախատեսված այլ գործառույթներ:

8. Հայտերի ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովի որոշմամբ՝ Հանձնաժողովի նախագահն անվճար հիմունքներով կարող է ներգրավել փորձագետներ, կազմակերպություններ կամ պետական մարմիններ՝ ոլորտային ուղղվածությամբ փորձագիտական կարծիք ստանալու համար: Անձը կամ կազմակերպությունը սույն կետով սահմանված կարգով չի կարող ներգրավվել Հանձնաժողովի աշխատանքներին, եթե վերջինս ներկայացրել է հայտ:

9. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել, իսկ Հանձնաժողովի ցանկացած անդամ, ինչպես նաև սույն Կարգի համաձայն հրավիրված փորձագետ նիստին կարող է մասնակցել առցանց եղանակով՝ կապի այնպիսի միջոցների օգտագործմամբ, որոնք ապահովում են նիստին Հանձնաժողովի անդամների միաժամանակյա մասնակցության հնարավորությունը: Նիստի առցանց անցկացումը, ինչպես նաև Հանձնաժողովի առանձին անդամների կամ փորձագետների առցանց մասնակցությունը նիստին ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:

10. Նիստն իրավազոր չլինելու դեպքում Հանձնաժողովի նախագահը սահմանում է նոր նիստի անցկացման օրը և ժամը:

11. Հանձնաժողովի նիստերին Հանձնաժողովի որոշակի անդամի պարբերական բացակայության կամ սույն Կարգով նախատեսված գործառույթները պատշաճ չկատարելու դեպքում անհապաղ նշանակվում է Հանձնաժողովի նոր անդամ:

12. Հանձնաժողովի նիստերը ենթակա են ձայնագրության կամ տեսաձայնագրության և արձանագրման:

13. Նիստերի արձանագրությունները ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Յուրաքանչյուր նիստից հետո Հանձնաժողովի քարտուղարը նիստի արձանագրությունն ուղարկում է նիստին ներկա գտնված անդամներին, ովքեր կարող են 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նիստի արձանագրության բովանդակության վերաբերյալ գրավոր առարկություններ: Ներկայացված առարկությունը նիստի ձայնագրության հետ համադրության արդյունքում կարող է ճանաչվել ընդունելի: Այդ դեպքում Հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ արձանագրությունում կատարվում են համապատասխան փոփոխություններ, որից հետո փոփոխված արձանագրությունը քարտուղարն ուղարկում է Հանձնաժողովի անդամներին:

14. Հայտերի քննարկման նպատակով Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել Հանձնաժողովի նիստերի ժամանակացույցով չսահմանված (արտահերթ) նիստեր:

15. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
16. Հանձնաժողովի անդամներին, քարտուղարին և հրավիրված փորձագետներին արգելվում է հայտերի բովանդակության վերաբերյալ տեղեկություններ հաղորդել երրորդ անձանց՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Սույն կետի խախտում չի համարվում այնպիսի տեղեկության բացահայտումը, որը բացահայտման պահին հայտնի է հանրությանը: Հանձնաժողովի անդամի (քարտուղարի, փորձագետի)՝ սույն կետով սահմանված պարտականությունը շարունակում է գործել հայտի գնահատումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում, իսկ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկության դեպքում՝ մինչև այն պահը, երբ տեղեկությունը դադարում է լինել առևտրային գաղտնիք:
17. Հանձնաժողովի անդամը, քարտուղարը կամ հրավիրված փորձագետը չի կարող մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին, եթե պարզվում է կամ վերջինիս հայտնի է, որ հայտ է ներկայացրել իր հետ փոխկապակցված անձ: Սույն կետի իմաստով փոխկապակցվածությունը համարվում է առկա հետևյալ դեպքերում.
    1) հայտ ներկայացրած ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հանդիսանում է Հանձնաժողովի անդամի, փորձագետի կամ քարտուղարի ընտանիքի անդամ՝ հայր, մայր, ամուսին, ամուսնու ծնող, տատ, պապ, քույր, եղբայր, երեխա, քրոջ, եղբոր ամուսին կամ երեխա (այսուհետ՝ Ընտանիքի անդամ),
    2) Հանձնաժողովի անդամը, փորձագետը կամ քարտուղարը կամ վերջինիս Ընտանիքի անդամն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է հայտ ներկայացրած կամ վերջինիս հետ ընդհանուր հսկողության ներքո գտնվող իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 5 (հինգ) կամ ավելի տոկոսին,
    3) Հանձնաժողովի անդամը, փորձագետը կամ քարտուղարն այլ կերպ հսկում է հայտ ներկայացրած իրավաբանական անձին կամ ունի վերջինիս որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն,
    4) Հանձնաժողովի անդամը, փորձագետը կամ քարտուղարը հայտ ներկայացրած իրավաբանական անձի տնօրենների խորհրդի անդամ կամ աշխատակից է,
    5) Հանձնաժողովի անդամը, փորձագետը կամ քարտուղարը հայտ ներկայացրած անձի հետ կնքել է ծառայությունների մատուցման գործող պայմանագիր (պայմանագրեր) և դրա (դրանց) շրջանակում վերջին 3 (երեք) տարվա ընթացքում ստացել առնվազն 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամին համարժեք վարձատրություն:
18. Փոխկապակցվածության մասին տեղեկանալու դեպքում Հանձնաժողովի անդամը, քարտուղարը կամ հրավիրված փորձագետը անհապաղ հայտնում է ինքնաբացարկ, ինչից հետո նշանակվում է Հանձնաժողովի նոր անդամ կամ քարտուղար կամ հրավիրվում է նոր փորձագետ:

19. Հանձնաժողովի անդամը, հրավիրված փորձագետը կամ քարտուղարը մինչև Հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվելը ստորագրում են փոխկապակցվածության բացակայության մասին հայտարարություն:
20. Սույն Կարգով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքում Հանձնաժողովի անդամների, քարտուղարի և փորձագետների միջև հաղորդակցությունը՝ ներառյալ փաստաթղթերի փոխանակումն իրականացվում է գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային նամակների և փաստաթղթերի փոխանակման միջոցով: Հանձնաժողովի անդամները, քարտուղարը և փորձագետը էլեկտրոնային հաղորդակցությունը պետք է վարեն այն մարմնի կամ կազմակերպության էլեկտրոնային փոստի միջոցով, որում պաշտոնավարելը հիմք է հանդիսացել իրենց՝ որպես Հանձնաժողովի անդամ նշանակվելու կամ Հանձնաժողովի աշխատանքներին որպես փորձագետ ներգրավվելու համար: Փորձագետները, ովքեր չեն հանդիսանում որևէ կազմակերպության ներկայացուցիչ, էլեկտրոնային հաղորդակցությունը վարում են անձնական էլեկտրոնային փոստի միջոցով:
21. Սույն Կարգով նախատեսված փաստաթղթերը կարող են ստորագրվել ինչպես ձեռագիր, այնպես էլ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳ

22. Հանձնաժողովն ուսումնասիրում և գնահատում է հայտերը և ամփոփում գնահատման արդյունքները հայտերի ընդունման վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում:
23. Հանձնաժողովի նախագահը հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո հրավիրում է նիստ, որի ընթացքում քարտուղարը հայտարարում է ներկայացված հայտերի քանակը և դիմողների անունները (անվանումները): Հայտերի քանակից ելնելով՝ Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ Հանձնաժողովը հաստատում է նիստերի ժամանակացույցը և ընդունում Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանն առնչվող այլ որոշումներ:
24. Հայտերի քննարկման նպատակով հրավիրված յուրաքանչյուր նիստից առաջ Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին է տրամադրում տվյալ նիստին քննարկման ենթակա հայտերը և գնահատման թերթիկը: Քարտուղարն ապահովում է Հանձնաժողովի օտարազգի անդամների և օտարերկրացի փորձագետների համար հայտերի անգլերեն թարգմանությունը:
25. Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամները կատարում են հայտերի վերաբերյալ հարցադրումներ և դիտարկումներ, ինչի արդյունքում մինչև Հանձնաժողովի կողմից սահմանված վերջնաժամկետը քարտուղարին են ուղարկում գնահատման լրացված և ստորագրված թերթիկները:
26. Հանձնաժողովն իրավունք ունի մինչև հայտի գնահատումը դիմողից պահանջել հայտում ներկայացված տեղեկությունների վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ: Լրացուցիչ պարզաբանումները դիմողը ներկայացնում է գրավոր, այդ թվում՝

էլեկտրոնային եղանակով, պարզաբանումներ ստանալու վերաբերյալ գրությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

27. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ինքնուրույն գնահատում է ներկայացված հայտերը հետևյալ չափանիշներով և կշիռներով՝
    1) նորարարական և գիտական արժեք՝ առավելագույնը 32 միավոր,
    2) իրականացման իրատեսականություն (նախագծի կիրառելիության մակարդակը, նախատիպի կամ փորձնական լուծման առկայությունը)՝ առավելագույնը 31 միավոր,
    3) ծրագրային արտադրանքի (product) առաջընթացի մակարդակ (ընթացիկ փուլը)՝ առավելագույնը 21 միավոր,
    4) սոցիալական կամ տնտեսական ազդեցություն՝ առավելագույնը 16 միավոր:
28. Հայտը համարվում է Հանձնաժողովի անդամի դրական եզրակացությունը ստացած, եթե տվյալ անդամի կողմից այն գնահատվել է առնվազն 50 միավոր: Հայտը համարվում է Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած, եթե դրան դրական եզրակացություն է տվել Հանձնաժողովի անդամների մեծամասնությունը:
29. Եթե Հանձնաժողովի անդամի կարծիքով իր կողմից դրական եզրակացություն ստացած հայտով պահանջվող հաշվողական ռեսուրսների հասանելիության չափն ավել են անհրաժեշտից, Հանձնաժողովի անդամը գնահատման թերթիկում այդ մասին կատարում է նշում, ինչպես նաև շարադրում է այն հարցադրումները, որոնք իր կարծիքով պետք է ուղղվեն դիմողին՝ պահանջվող ռեսուրսների հասանելիության նպատակահարմար չափը որոշելու համար:
30. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր գնահատման արդյունքներն ամփոփում է գնահատման թերթիկի վրա:
31. Քարտուղարն ամփոփում է յուրաքանչյուր հայտի գնահատման թերթիկների արդյունքները և կազմում Հանձնաժողովի՝ դիմողին հաշվողական ռեսուրսներին հասանելիություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին եզրակացությունը, որը ստորագրում է Հանձնաժողովի նախագահը:
32. Եթե հայտը ստացել է Հանձնաժողովի դրական եզրակացությունը, և դրա վերաբերյալ Հանձնաժողովի ոչ մի անդամ չի կատարել սույն Կարգի 29-րդ կետում նշված հարցադրում, ապա որպես տվյալ հայտը ներկայացրած դիմողին տրամադրվող հաշվողական ռեսուրսներին հասանելիության՝ Հանձնաժողովի կողմից առաջարկվող չափ և ժամկետ են սահմանվում հայտում նշված չափը և ժամկետը:
33. Եթե հայտը ստացել է Հանձնաժողովի դրական եզրակացությունը և դրա առնչությամբ Հանձնաժողովի որևէ անդամ կատարել է սույն Կարգի 29-րդ կետով նախատեսված հարցադրում, ապա Հանձնաժողովի քարտուղարն այն գրավոր ուղղում է դիմորդին, իսկ վերջինս գրավոր պատասխանում է դրան այն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հարցադրումների պատասխանները ստանալուց հետո Հանձնաժողովի նախագահը հրավիրում է Հանձնաժողովի լրացուցիչ նիստ, որի

ընթացքում որոշվում է տվյալ դիմորդին տրամադրվող հաշվողական ռեսուրսների հասանելիության՝ Հանձնաժողովի կողմից առաջարկվող չափը և ժամկետը:

34. Գնահատման արդյունքներով Հանձնաժողովը կազմում է հիմնավորված եզրակացություն՝ դիմողին հաշվողական ռեսուրսներին հասանելիություն տրամադրելու կամ մերժելու մասին, նշելով՝
    1) տրամադրվող հաշվողական ռեսուրսների տեսակը և չափը,
    2) հասանելիության ժամկետը:
35. Հանձնաժողովի Նախագահը ամփոփիչ նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին: Նախարարը հանձնաժողովի եզրակացության հիման վրա այն ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում է հաշվողական ռեսուրսներին հասանելիություն տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում, որի մասին Հանձնաժողովի քարտուղարը դիմողին տեղեկացնում է որոշման ընդունման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Մերժման դեպքում դիմողը նաև տեղեկացվում է մերժման հիմքերի կամ պատճառների մասին: